ՄԻԱՎ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՀՂԻՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիս, 2019

Լիլիթ Գևորգյան
Դավիթ Դաղայյան

Իրավիճակի նկարագրություն

ՄԻԱՎ (Մարդու Իմունային Անբավարարության Վիրուս) դրական կարգավիճակ ունեցող կանանց համար՝ գենդերային հավասարության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների վրա հիմնված սեռական և վերարտադրողական առողջության որակյալ ծառայությունների տրամադրումը, կառուցվածքային, սոցիալական և մշակութային պայմանները, ինչպես նաև համապատասխան հանրային քաղաքականության առկայությունը կամ բացակայությունը, ծրագրային աջակցությունը կարող են դրական ազդեցություն ունենալ ՄԻԱՎ դրական կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության և ընտանիքի ձևավորման վրա:

Աշխարհի շատ երկրներում, ՄԻԱՎ վարակն առավել հաճախ փոխանցվում է սեռական ճանապարհով կամ հղիության, ծննդաբերության և կրծքով կերակրման ընթացքում: Հայաստանում ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող կանանց համար խնդիր է հանդիսանում որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիությունը և մատչելիությունը:

Մյուս կողմից էլ՝ ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող հղի կամ հղիություն պլանավորող կանայք հաճախ դատապարտվում և խտրականության են ենթարկվում հենց այն բժշկական օգնություն և սպասարկում տրամադրողների (բուժաշխատողների) կողմից, որոնց դիմում են կանայք՝ օգնություն ստանալու համար: Խտրականությունը և իրավունքների խախտման դեպքերը չեն սահմանափակվում միայն բուժհաստատության ներսում և դրսևորվում են նաև հասարակության, բարեկամների և ընտանիքի անդամների շրջանում:

Հիմնախնդիր

- **Գաղտնիության իրավունք.**
  - ՄԻԱՎ դրական կանանց վերարտադրողական առողջության հետ կապված ծառայությունների մատուցման տարբեր փուլերում բուժաշխատողների կողմից խախտվում է վերջիններիս գաղտնիության իրավունքը
  - ՀՀ օրենսդրությունը, որը կարգավորում է բժշկական գաղտնիքի հետ կապված հարաբերությունները, թերի է:
- **Խտրականության և խարանի դրսևորման դեպքեր.**
  - Կանանց՝ ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակով պայմանավորված խտրականություն բուժաշխատողների, հասարակության, բարեկամների, ընտանիքի անդամների կողմից, ինչը հանգեցնում է ոչ միայն հոգեբանական ճնշման, այլ նաև ուղղակիորեն ազդում է կնոջ և երեխայի առողջության վրա:

- ՄԻԱՎ դրական հղիների՝ հասարակության կողմից խարանի և խտրականության դեպքերի դրսևորման վախով պայմանավորված, արտահիվանդանոցային մանկաբարձագինեկոլոգիական ծառայություններ ստանալու նպատակով բնակավայրը փոխելու անհրաժեշտություն:

- **ՄԻԱՎ-ի վերաբերյալ բուժաշխատողների ոչ բավարար գիտելիքներով, ինչպես նաև ՄԻԱՎ դրական պացիենտների ու բուժաշխատողների՝ առողջապահության ոլորտում իրենց իրավունքների ու պարտականությունների մասին ցածր իրազեկվածությամբ պայմանավորված, բուժաշխատողների կողմից ՄԻԱՎ դրական կանանց մի շարք իրավունքների խախտում, որոնք կարող են դրսևորվել՝**
  - ծառայությունների. բժշկական պարագաների ու գործիքների համար հավելյալ գումար պահանջելով,
  - հղիին՝ իր վերարտադրողական առողջության հետ կապված խորհրդատվության տրամադրման հարցում թերացումներով, որը կարող է հանգեցնել հղիության ընդհատման կամ ոչ անհրաժեշտ կեսարյան հատման:
  - պոլիկլինիկաներում կամ առողջության առաջնային պահպանման կենտրոններում (ԱԱՊ) ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնելիս մի շարք բացթողումների առկայությամբ՝
    - առանց հղիին տեղյակ պահելու, կամ առանց վերջինիս համաձայնության՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության իրականացում
    - թերացումներ նախաթեստային և հետթեստային խորհրդատվության տրամադրման գործընթացում:

    Սա էլ իր հերթին հանգեցնում է հղիների կողմից վստահության ցածր մակարդակի պոլիկլինիկայի և ԱԱՊ բուժաշխատողների հանդեպ:

- **Ոլորտում աշխատող վերապատրաստված մասնագետների և կառույցների սակավություն (բուժաշխատողներ, սոցիալական աշխատողներ, հոգեբաններ) և հիվանդանոցային մանկաբարձագինեկոլոգիական ծառայությունների կենտրոնացվածություն:**

Առաջարկություններ

ՀՀ Առողջապահության նախարարություն

- Բարձրացնել հղի կանանց մատուցվող բժշկական օգնության և սպասարկման գործընթացում պետական վերահսկողությունը, մշակել մեխանիզմներ ուղղված կոռուպցիոն դեպքերի բացառմանը,
- Փոփոխել և կատարելագործել ՀՀ օրենսդրությունը, մանրամասն կարգավորելով բժշկական գաղտնիք պարունակող տեղեկատվության շրջանառության, գաղտնիության իրավունքի պահպանման, ինչպես նաև գաղտնիության իրավունքի խախտման համար պատասխանատվության վերաբերյալ հարաբերությունները: Բժշկական գաղտնիքի բացահայտման համար պատասխանատվություն նախատեսել ոչ միայն բուժաշխատողների այլ նաև բոլոր այն անձանց համար, որոնք առնչվում են բժշկական գաղտնիք պարունակող տեղեկատվության հետ:
- Ապահովել ՄԻԱՎ/ՁԻԱՀ ոլորտում մատուցվող մանկաբարձագինեկոլոգիական ծառայությունների ապակենտրոնացվածությունն ու տարածքային մատչելիությունը,

- Ընդունել խտրականությունը բացառող օրենսդրություն և «առողջական վիճակը» սահմանել որպես խտրականությունն արգելող հիմք,
- Պարզեցնել հղիների հաշվառումը փոխելու ընթացակարգը,
- Ապահովել, որպեսզի կեսարյան հատումներն իրականացվեն միայն մոր և երեխայի առողջությանը վտանգ ներկայացնող բժշկական ցուցումների դեպքում,
- Ապահովել բուժաշխատողների վերապատրաստման դասընթացների շարունակականությունը,
- Վերանայել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում դասավանդվող նյութերը՝ ապահովելով ՄԻԱՎ դրական կանանց վերարտադրողական առողջության և ՄԻԱՎ վարակի առանձնահատկությունների, ինչպես նաև նշված ոլորտում բուժաշխատողների ու պացիենտների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն,

ՀՀ Առողջապահության նախարարություն և Հասարակական կազմակերպություններ

- Բարձրացնել բուժաշխատողների իրազեկվածությունը ՄԻԱՎ վարակի, փոխանցման ուղիների, մորից երեխային վարակի փոխանցման և կանխարգելման ժամանակակից մոտեցումների, ինչպես նաև գաղտնիության իրավունքի վերաբերյալ՝ դրանով իսկ մեծացնելով վստահությունը բուժանձնակազմի և բժշկական հաստատությունների նկատմամբ:
- Բարձրացնել ՄԻԱՎ դրական հղի կանանց իրազեկվածությունը առողջապահության ոլորտում իրենց իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև իրավունքների պաշտպանության մեխանզիմների վերաբերյալ:

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում: Սույն փաստաթղթում առկա մտքերն արտահայտում են հեղինակների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ: